«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

27 Դեկտեմբերի 2022, N 4 - 5

«ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ, ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, «ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 9 - 3 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17-րդ կետի 8-րդ ենթակետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը, առաջնորդվելով գիտական գործունեության միջազգայնացման առաջնահերթություններով՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. «ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» (կրճատ՝ «ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ») գիտական հանդեսը վերանվանել «MESSENGER OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS» (կրճատ՝ «MESSENGER OF ASUE»)՝ տարեկան 3 անգամյա պարբերականությամբ՝ անգլերենով:
   Գիտական հանդեսի անվանումն է՝
   հայերեն՝ «ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» (կրճատ՝ «ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ»),
   ռուսերեն՝ «ВЕСТНИК АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА» (կրճատ՝ «ВЕСТНИК АГЭУ»):

2. Հիմնադրել «ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» գիտական հանդես՝ տարեկան 3 անգամյա պարբերականությամբ՝ հայերենով:

Գիտական հանդեսի անվանումն է՝
ռուսերեն՝ «ЭКОНОМИКА И ОБЩЕСТВО»,
անգլերեն՝ «ECONOMY AND SOCIETY»:

3. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի ապրիլի 14-ի ««Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» գիտական հանդեսի պարբերականությունը փոփոխելու մասին» N 9 - 3 որոշումը:

4. Գիտության գծով պրոռեկտոր Թ.Մ.Մկրտչյանին՝ ապահովել գիտական հանդեսների հրատարակման և առաքման (տարածման) հետ կապված անհրաժեշտ գործողությունների իրավական հիմքերը:

5. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել գիտության գծով պրոռեկտոր Թ.Մ.Մկրտչյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2022 թ. դեկտեմբերի 27
Երևան